

Դոկտոր Ա. ՏԻՐԱՅՅԱՆ

Ն. Վ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ ԱՌԹԻՎ

Այս տողերը կգրեմ ո՛չ միայն աշակերտի մը՝ իր 80-ամյա ծերունազարդ ուսուցչին հանդեպ խորին հարգանքները արտահայտելու համար, այլ նաև վեր հանելու համար մեծ Հոբելյարը հատկանշող կարգ մը գծեր, որոնք կհատկանշեն Գարեգին Կաթողիկոսը իբրև ուսուցիչ, գիտնական ու իբրև հայրենասեր:

Գեորգյան ճեմարանը ավարտելով երիտասարդ Գարեգին կընդունի հոգևոր կոչում և կամեկնի Գերմանիա, ու վերջացնելով իր բարձրագույն ուսումը, կվերադառնա էջմիածին, նվիրվելու համար ուսուցչական և գիտական ասպարեզներուն: Իբրև ուսուցիչ և տնօրեն, ան երկար տարիներ պաշտոնավարած է ճեմարանի և Երևանի թեմական դպրոցին մեջ: Ան համոզված հոգևորական էր և իր այս համոզմունքը, ավելի քան ունէ մեկը իր վարդապետ ընկերներեն, կարմիր թելի պես կանցնուներ իր դասախոսություններուն ընթացքին: Անմասն դասախոս էր, հարուստ ոճով ու բառապաշարով և մանավանդ համոզելու շունչով:

Մեծ խեղճ խոստ մըն էր, որ խորապես կը համատար խոսքի ուժին, իր խոսքի կատարելիք տպավորությունը:

Այսու հանդերձ, ան սովորական վերադառնալով մը չէր, որ կխոսի, կքարոզե ու կանցնի, առանց այնուհետև մտածելու ԳՈՐԾԻ մասին: Իր գործի ամենաբեղուն ասպարեզը եղավ գիտական աշխատանքը, զոր ան զարգացուց լայնորեն, հակառակ իր ստանձնած պաշտոններեն բխող զբաղումներուն: Դեռ երիտասարդ սարկավազ, ան հրատարակեց Սասունցի Դավիթի փոփոխականներն մին, որ Գարեգին վարդապետ Սրվանձտյանի և Մ. Աբեղյանի գործերեն անմիջապես հետո երրորդը հանդիսացավ: Իր ամբողջ կյանքի գիտական գործն է եղած սակայն «Հայկական գրադրության պատմությունը» հակա աշխատությունը, որու հրատարակումը այսօր կրեթկատվի ծերունազարդ Հոբելյարի կողմն իր կյանքի գերագույն նպատակը: Այս աշխատության վրա ան ձգնած է ավելի քան քառասուն տարիներ, զրեթն սպառելով հայկական գրադրության համար տրամադրելի նյութերը:

Գարեգին Ա-ի հայկական պատմագրական գործերը տասնյակ հատորներ կկազմեն, որոնցմե հիշենք հոս «Նաղբակեանք», «Պոռո-

եանք» և այլն, որոնք թանկագին մենագրություններ են ու վստահելի ատաղձներ Հայոց պատմության համար:

Իր անբավ հայրենասիրությունն բխող այս գրական-գիտական աշխատությանց համընթաց Գարեգին Կաթողիկոս եղած է նաև կենդանի հայրենասիրական գործի մարդը: Իր ժողովուրդասիրությունը և հայրենասիրությունը ան քաղած է հայ ժողովուրդին իսկ, շարունակ շրջագայելով Հայոց աշխարհը և շփման մեջ մտնելով հայ ժողովրդի ամենահամեստ խավերուն հետ, ինքն ալ արդեն ալ համեստ խավի, հայ գյուղացիի զավակն եղած ըլլալով: Երբ թուրքերը 1918-ին էջմիածնի դուռներուն առաջն էին կանգնած, հարձակումով մը զայն գրավելու համար, Գարեգին վարդապետ հայ գինվորներու խրամատներն խրամատ կփութար, ոգևորելու համար զանոնք հայրենասիրական հուրով: 1920-ին Կարսի մեջ թուրքերու ձեռքը գերի կիյնա ու միայն հրաշքով կփրկվի:

Գաղութահայությունը ավելի մոտիկին ծանոթ է Գարեգին Կաթողիկոսի վերջին 13 տարիներու հանրային գործունեությանը, երբ ան իբրև կաթողիկոսական պատվիրակ Պուրբիշի վրայով անցավ Ամերիկա, ուր ընդարձակեց հասարակական աշխատանք մը, որով կհետապնդեր ամերիկահայությունը ավելի սերտորեն կապելու մեր պետականացած Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

Գարեգին Ա-ի Տանն Կիլիկիո Կաթողիկոս ընտրվիլը ընդմիշտ կտրեց ախորժակը դաշնակցության, որ կհետապնդեր այդ Աթոռին վրա դնելու իրեն հլու հնազանդ կաթողիկոս մը, այդ ձևով գաղութահայությանը գեթ մեկ մասը երկպառակելու համար, ինչպես որ ըրած էր մասամբ մը Ամերիկայի մեջ: Գարեգին Սրբազանի ընտրությունը վերջ տվավ այդ խաղերուն, որովհետև ան գիտցավ իր հոտն առաջնորդել դեպի էջմիածին, դեպի Մայր Հայրենիք, դեպի Սովետական Հայաստան:

Գարեգին Ա-ի այս համոզումները բյուրեղացան 1945-ի կաթողիկոսական ընտրություններու պահին, երբ 500 տարիներու ընթացքին առաջին անգամ ըլլալով Կիլիկիո Կաթողիկոսն անձամբ էջմիածին եկավ, հանձին Գարեգին Ա-ի, ու մասնակցեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և օծման, այսպիսով վերջնականապես սրբազործելով հայ եկեղեցվո միասնականությունը:

Այս պատմական աքտը սակայն միաժամանակ միասնականության աքտ մըն էր գաղութահայության և Մայր Հայրենիքի հայ ժողովրդի և իր պետության՝ Սովետական Հայաստանի միջև, որուն նաև այս միջոցով

ծառայեց այսօրվա ծերունադարձ Հոբելյարը։ Մաղթենք, որ իր բազմաբեղուն կյանքը երկարի այնքան տարիներ, որքան որ պատկառելի Հոբելյարը դեռ իր մեջ տեսչ և կորով կղզա աշխատելու և արտադրելու։

(«Հայաստանեան ձախառ» 23 նոյեմբեր 1947 թ.)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿԻ ԿՈՉԸ

Մեր վարչական առօրյա գրադոմներեն անկախ, ավելի քան քսան տարիներն ի վեր դբադած ենք հայերեն ձեռագիրներու քննությանմբ։ Ցարդ հրատարակած ենք Հալեպի, Անթիլիասի և Սուրիո մասնավորներու քով գտնվող հայերեն ձեռագրաց մայր ցուցակները։ Մոտ օրեն ֆարիզի մեջ տպագրության պիտի հանձնենք Նրուաղեմի ձեռագիրներու մեր մայր ցուցակի ընդարձակ Ա հատորը։ Նկատելով որ մեր ցեղին ենթարկված աղետով հազարավոր ձեռագիրներ կորսվեցան և շատ քիչեր միայն մնացին հայ և օտար մասնավորներու քով, այդ քիչերն ալ անխուսափելի կորուստն փրկելու առաջադրությամբ ավելի քան տարիներ ի վեր հետամուտ եղանք Եվրոպայի մեջ ևս գտնելու, մասնավորներու սեփականությունը եղող ձեռագիրներ և ցարդ պատահաբար գտանք Բաբե և

վելի, զորս խնամով քննեցինք և ցուցակագրեցինք և բոլորն ալ վերադարձուցինք իրենց տերերուն։

Հայրաբար և հանուն հայ մշակույթի անցյալ բեկորներու փրկության, սրտագին կոչ կուղղենք Եվրոպայի մեր սիրելի ժողովուրդին, որ իր մոտ գտնված հայերեն ձեռագիրները վստահորեն հանձնի մեզի, ֆարիզի մեր հասցեն, 15 ռիվ. Ժան Կուսմոն, որպեսզի բոլորն ալ քննենք և հետագայի առանձին ցուցակով հրատարակենք, հօգուտ հայ և օտար բանասիրության։

Մեր ցեղի պատմության ամենամեծ մասը գրված է մեր հայերեն ձեռագիրներու թանկագին հիշատակարաններուն վրա։

Հուսալով որ ներկա մեր կոչը ընդունելով լուծն պիտի գտնեն մեր հայրենասեր ժողովուրդեն, կանխահայտ շնորհակալությամբ

Մնամք աղոթարար Հայրապետական

Պատվիրակ Եվրոպայի Հայոց

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

17 նոյեմբեր 1947 թ.

(«Արևմուտք» 23 նոյեմբեր 1947 թ.)

